ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 փետրվարի 2022 թվականի N 131

«ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԼԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 23.1-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1617-Ն որոշման, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, հիմք ընդունելով «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2022 թվականի հունվարի 31-ի N S-107).

1. «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2022 թվականի ընթացքում Աբովյան համայնքի Բալահովիտ գյուղի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն (Թույլտվություն N 02 կցվում է):
2. «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է 900105206065 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

2022թ. փետրվարի 04
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ Ֆ - 02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ

Տրված՝ ***04 փետրվարի 2022թ.***

Թույլատրված գործունեության անվանումը՝
Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործում:

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
«ԲԱԼԱՀՈՎԻՏ-1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ՀՀ, Կոտայքի մարզ Բալահովիտ գյուղ, ՀՎՀՀ՝ 03502736:
Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ, Կոտայքի մարզ, Աբովյան համայնք Բալահովիտ գյուղ 8-րդ փողոց թիվ 17-17/1:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հունվարի 2022թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2022թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ